համակիր հայերը Ի՛լ աւելի բարեկամանում էին նրանց հետ՝ աստիճանաբար յարելով կաթոլիկութեան:

Այս կարգի անձերից էին, ուրիշ շատերի թւում, եւ այն ժամանակուան երկու երեւելի դէմքերը՝ Մխիթար վարդապետ Սեբաստացին եւ տէր Կոմիտաս Քէշոմուրճեանը: Վերջինը դուրս է ներկայ յօդուածի սահմաններից եւ արժէ որ առանձին հետաքննութեան նիւթ դառնայ: Իսկ Մխիթար Սեբաստացու գործունէութեան կը ծանօթանանք հէնց հիմա ամփոփ գծերով, որքան որ նա անդրադարձել է իր հիմնած միաբանութեան ճակատագրի վրայ:

Մանուկը (հետագային հոգեւորական անունով Մխիթար) ծնուել է 1676 թ. Փետր. 7-ին Սեբաստիայում, մի համեստ ընտանիքի մէջ: Հօր անունն էր Պետրոս, մօրը՝ Շահրիսատան: Դեռ մանուկ հասակից սկսած, Մանուկը աչքի էր ընկնում կրօնական զգացմունքով եւ առանձին հետաքրքրութեամբ դէպի կրօնական հարցերը: 15 տարեկան, նա արդէն ձեռնադրուում է սարկաւագ Մխիթար անունով: Այդ հասակից սկսում է նրա հոգեւորական կեանքն ու գործունէութիւնը: Նա շատ էր սովորում, այցելում էր իրենց գիտնական վարդապետներով յայտնի վանքերը, ամէն տեղ հաւաքում էր ինչ որ կարելի էր հաւաքել կրօնական գիտութեան գանձարանից: Իր այդ ճանապարհորդութիւնների ժամանակ, Հայաստանում, նա մէկից աւելի անգամներ հանդիպում էր միսիոնարներին, որոնք բացատրում էին նրա վիճելի խնդիրները, տալիս էին հայերէն հոգեւոր գրքեր, հրատարակուած մեծ մասամբ Հռոմում, եւ, ըստ երեւոյթին, շատ բարձր էին գնահատում այդ հարցասէր ու տաղանդաւոր պատանուն, որ զարմացնում էր նրանց իր յարատեւութեամբ, կրօնական զգացմունքի խորութեամբ եւ անկեղծութեամբ, ուսման անյագ ծարաւով եւ ամուր ցանկութեամբ իր ձեռք բերած զարգացման պտուղները սեփականութիւն դարձնելու իր անհունօրէն սիրելի հայ ժողովրդին: Սրատես միսիոնարները անմիջապէս հասկացան, թէ ի՛նչ թանկագին նուաճում կը լինի այդ պատանու դրաւումը իրենց կողմ: Այդ պատճառով, հէնց առաջին հանդիպումից Մխիթարին տալիս են յանձնարարականներ իրենց կենտրոնական հիմնարկութիւններին եւ սրանց ուշադրութիւնը հրաւիրում են նրա վրայ*):

Մխիթարին, ի հարկէ, պարզ չեն նրանց նպատակները՝ հայերին կաթոլիկութեան դարձնելը, հայոց եկեղեցու միացումը կաթոլիկ եկեղեցուն՝ հրաժարուելով հայ ազգային եկեղեցու հերձուածից եւ դաւանութիւններից ու աւանդութիւններից: Մենք արդէն տեսանք, թէ միսիոնարները ինչպիսի ճարպիկութեամբ թաղցնում էին իրենց քամահրանքը հայոց եկեղեցու նկատմամբ՝ նոյնիսկ հայերէն կեղծ բնագիրների հրատարակութեամբ: Եւ Մխիթարը, ճաշակելով բարոյ եւ չարի գիտութեան ծառի պտուղներից, սկսում է ձգտել Կ. Պոլիս, որ այն ժամանակ միսիոնարական կազմակերպութիւնների եւ սրանց կրթական ու դաստիարակչական գործունէութեան կենտրոնն էր: Շատ եւրոպացիներ եւ, մանաւանդ, Եւրոպայի ամէն կողմերը ցրուած հայերը սիրով յաճախում էին այդ կենտրոնը եւ տեղական հայերին

*) Մինչեւ այսօր էլ վէճի առարկայ է այն հարցը, թէ ի՞նչ կրթութիւն է ստացել Մխիթարը՝ հայկակա՞ն, հետագային մի քիչ լրացուած կաթոլիկ միսիոնարների հետ ունեցած հանդիպումների ժամանակ, թէ՞ կաթոլիկ՝ ճիզուիտ վարդապետներից: Վենետիկի Մխիթարեանները, ահաբեկուած այն հալածանքներից, որ յարուցին Պրոպագանդայի կողմնակից (կոլէճցի) հայ կաթոլիկները, որոնք Մխիթարի մահուան օրից հէնց սկսած մեղադրում էին նրան հերձուածքի ու հերետիկոսութեան մէջ եւ մինչեւ այսօր էլ չեն դադարում ամբաստանելուց,— ի զուր ճգնում են ապացուցանել, որ Մխիթարը կրթութիւն է ստացել ճիզուիտ հայրերից, որոնց հանդիպել է Հալէպում: Վենետիկցիների հակառակորդները պնդում են, որ Մխիթարը ստացել է զուտ հայկական կրթութիւն, մի բան, որ, ի հարկէ, ճշմարտութիւն է: Մխիթարը մինչեւ մահ էլ վատ էր հասկանում լատիներէն եւ իտալերէն լեզուները եւ նրա բոլոր գրուածքները հիմնուած են հայ եկեղեցական հայրերի հայերէն հեղինակութիւնների ու բնագրերի, կամ յունական ու լատին եկեղեցիների հայրերի գրուածքների հայերէն թարգմանութեանց վրայ: